ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ II ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐՈՒՄ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, հիմք ընդունելով ՀՀ կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ ԿՏՄ) գործունեության 2021 թվականի տարեկան ծրագիրը, ի կատարումն «Կրթության տեսչական մարմին հանրությունից ստացվող բողոքների ընդունման և հետագա ընթացք տալու մասին» կարգի 11-րդ և 14-րդ կետերի պահանջների, ՌԳՍՊՎԳ վարչության կողմից իրականացվել է 2021 թվականի 2-րդ կիսամյակում ստացված դիմում-բողոքներում բարձրացված հարցերի, բերված փաստարկների նկատմամբ իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքների վերլուծություն (այսուհետ՝ վերլուծություն):

Վերլուծությունն իրականացվել է համաձայն հետևյալ բնութագրիչների՝

1. քանակական պատկեր՝ ըստ ամիսների, վերահսկողության ոլորտների, սկզբնական հասցեագրման աղբյուրների.
2. քանակական պատկեր՝ ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի, ուսումնական հաստատությունների, իրականացված վարչական վարույթների տևողության, դիմումատուների սեռերի.
3. իրականացված վերահսկողական գործառույթների (ստուգում կամ ուսումնասիրություն) արդյունքների.
4. բարձրացված հարցերի բովանդակության:

Տրվել է նաև նշված բնութագրիչների քանակական չափանիշների աճի կամ նվազման միտումը (համեմատական պատկեր՝ ըստ 2020 թվականի համապատասխան և նախորդ հաշվետու ժամանակահատվածների):

2021 թվականի 2-րդ կիսամյակում ԿՏՄ-ում ստացվել է 28 դիմում-բողոք, որից 22-ը վերաբերել են ՀՀ հանրակրթական, 5-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը, իսկ 1-ը եղել է այլ բնույթի:

2020 թվականի 2-րդ կիսամյակի համեմատությամբ՝ դիմում-բողոքների թիվն աճել է 47%-ով (2020 թվականի 2-րդ կիսամյակում ստացվել է՝ 19 դիմում-բողոք), իսկ նախորդ կիսամյակի համեմատությամբ նվազել է 12.5%-ով (2021 թվականի 1-ին կիսամյակ՝ 32 դիմում-բողոք):

2020 և 2021 թվականների 2-րդ կիսամյակների ընթացքում ստացված դիմում-բողոքների թիվն ըստ ամիսների ներկայացված է Գծապատկեր 1-ում.

Գծապատկեր 1.



27 դիմում-բողոքներից 22-ը վերաբերել են դպրոցների, 5-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը:

2020 թվականի նույն ժամանակահատվածում ԿՏՄ-ում ստացված 19 դիմում-բողոքներից 14-ը վերաբերել են դպրոցների, 2-ը՝ մանկապարտեզների, 3-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեությանը:

Ինչպես նախորդ հաշվետու ժամանակահատվածում (70%) և նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածում (74%), այս կիսամյակում ևս դիմումների գերակշռող մասը (81.5%) վերաբերել է դպրոցներին, ինչը պայմանավորված է նաև միջնակարգ կրթության ոլորտի շահառուների մեծ թվով (Գծապատկեր 2):

Գծապատկեր 2.



Նշված 28 դիմում-բողոքներից 2-ը ԿՏՄ վերահասցեագրվել են ՀՀ վարչապետի աշխատակազմից, 6-ը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից (այսուհետ՝ ԿԳՄՍՆ), իսկ 20-ը ստացվել են անմիջապես ԿՏՄ-ում (Գծապատկեր 3):

Գծապատկեր 3.



2021 թվականի 2-րդ կիսամյակում ԿԳՄՍՆ–ից հասցեագրված դիմում-բողոքների տոկոսային թիվը կազմել է 21%, որը 2020 թվականի նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշի համեմատ աճել է 1-ով՝ 16.6% և նախորդ կիսամյակի համապատասխան ցուցանիշի համեմատ նվազել է 5-ով՝ 45%:

Հաշվետու ժամանակահատվածում ստացված դիմում-բողոքների քանակական պատկերն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է Գծապատկեր 4-ում.

Գծապատկեր 4.



Դիմում-բողոքների թիվն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ուսումնական հաստատությունների ներկայացված է ստորև բերված աղյուսակում (Աղյուսակ 1).

Աղյուսակ 1.

ՀՀ մարզեր, Երևան քաղաք	*Դիմումների ընդհանուր թիվը (ներառյալ «Թեժ գիծը»)*	*Դիմումների թիվն ըստ ուսումնական հաստատությունների*
Երևան	*5*	*Երևանի հ. 1 հ/դ, Երևանի հ. 130 հ/դ, Երևանի հ. 163 հ/դ, Երևանի հ. 168 հ/ դ, Երևանի «Սուրբ Թերեզայի անվան գթության քույրերի բժշկական ինստիտուտ-քոլեջ» ՍՊԸ*
Կոտայք	*4*	*Քասախի հ. 2 մ/դ, Աբովյանի հ. 8 հ/դ (2), Հրազդանի հ. 10 ա/դ*
Լոռի	*4*	*Ալավերդու հ.12 հ/դ, Վանաձորի հ. 23 հ/դ, Վանաձորի հ. 24 հ/դ, Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ*
Սյունիք	*4*	*Քաջարանի հ. 1 մ/դ, Գորիսի 1 ա/դ, Գորիսի հ. 2 հ/դ (2)*
Արարատ	*3*	*Վեդիի հ.1 մ/դ, Արտաշատի ա/դ, Դարակերտի մ/դ*
Շիրակ	*3*	*Լուսակերտի մ/դ, Գյումրու թիվ 32 հ/դ, Գյումրու հ. 37 ա/դ*
Տավուշ	*2*	*Դիլիջանի պետական քոլեջ (2)*
Արմավիր	*1*	*Արմավիրի պետական բժշկական քոլեջ*
Վայոց ձոր	*1*	*Շատինի մ/դ*
Գեղարքունիք	*1*	*Սևանի հ. 3 հ/դ*
Ընդամենը	*28*	

2021 թվականի 2-րդ կիսամյակում և նախորդ երկու հաշվետու ժամանակահատվածներում ստացված դիմում-բողոքների քանակական պատկերն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է Գծապատկեր 5-ում.

Գծապատկեր 5.



Վերջին երեք կիսամյակների ընթացքում ստացված դիմում-բողոքների քանակով առաջին եռյակում են գտնվում Երևան քաղաքը, ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերը:

2021 թվականի 2-րդ կիսամյակում ստացված 25 ուսումնական հաստատությունների գործունեությանը վերաբերող դիմում-բողոքներն, ըստ լիազոր մարմնի ենթակայության, բաշխված են հետևյալ կերպ (Աղյուսակ 2).

Աղյուսակ 2.

Դիմում-բողոքների թիվն՝ ըստ լիազոր մարմնի և ուսումնական հաստատությունների		
ԿԳՄՍՆ	*7*	*Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ, Արտաշատի ա/դ, Գորիսի 1 ա/դ, Հրազդանի հ. 10 ա/դ, Գյումրու հ. 37 ա/դ, Դիլիջանի պետական քոլեջ, Արմավիրի պետական բժշկական քոլեջ,*
Երևանի քաղաքապետարան	*4*	*հ. 1 հ/դ, հ. 130 հ/դ, հ. 163 հ/դ, հ. 168 հ/դ*
ՀՀ Լոռու մարզպետարան	*3*	*Ալավերդու հ.12 հ/դ, Վանաձորի հ. 23 հ/դ, Վանաձորի հ. 24 հ/դ*
ՀՀ Կոտայքի մարզպետարան	*2*	*Աբովյանի հ. 8 հ/դ, Քասախի հ. 2 մ/դ*
ՀՀ Սյունիքի մարզպետարան	*2*	*Գորիսի հ. 2 հ/դ, Քաջարանի հ. 1 մ/դ*
ՀՀ Արարատի մարզպետարան	*2*	*Դարակերտի մ/դ, Վեդիի հ. 1 մ/դ*
ՀՀ Շիրակի մարզպետարան	*2*	*Գյումրու հ. 32 հ/դ, Լուսակերտի մ/դ*

ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	*1*	*Շատինի մ/դ*
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	*1*	*Սևանի հ. 3 հ/դ*
Ոչ պետական ուսումնական հաստատություն	*1*	*Երևանի «Սուրբ Թերեզայի անվան գթության քույրերի բժշկական ինստիտուտ-քոլեջ» ՍՊԸ*

Հարկ է նշել, որ 2021 թվականի 2-րդ կիսամյակի 25 ուսումնական հաստատությունների վերաբերյալ ստացված 28 դիմումներից 8-ը՝ 29%, վերաբերել են ԿԳՄՄՆ ենթակայության ուսումնական հաստատություններին: Նախորդ կիսամյակում համապատասխան ցուցանիշը կազմել է 38% (32 դիմումներից 12-ը):

Իրականացված վարչական վարույթների միջին տևողությունը կազմել է 13 օր: Այս ցուցանիշը նախորդ կիսամյակում կազմել է 8, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակում՝ 7 օր:

2021 թվականի 2-րդ կիսամյակում 28 դիմումատուներից 20-ը (71%) կանայք են (նախորդ կիսամյակում կազմել է 75%): 6 (21%) դիմում-բողոքներ ներկայացված են եղել տղամարդկանց, 1 (6%) դիմում–բողոք՝ մի խումբ քաղաքացիների կողմից և 1-ը (6%)՝ ԿԳՄՄՆ-ում ստացված ահազանգի հիման վրա:

Ըստ ստացված դիմում-բողոքների՝ վերահսկողական գործառույթներ են իրականացվել **9**-ուսումնական հաստատություններում (32%), որոնցից 7-ը եղել է վարչական վարույթ, **2**–ը՝ ստուգում: Դիմում–բողոքներից **7**–ը (25%) վերահաստատագրվել է (մասամբ վերահաստատագրված՝ 3 և ամբողջությամբ՝ 4), **7**–ը (25%)՝ կարճվել, 2-ը (7%) ընթացքի մեջ է, **8**-ում (29%) բարձրացված հարցերի ուսումնասիրությունը մասամբ (3) կամ ամբողջությամբ (5) դուրս է եղել ԿՏՄ լիազորություններից: Վերահաստատագրված դիմում–բողոքների թիվն ըստ համապատասխան մարմինների ներկայացված է Գծապատկեր 6-ում:

Գծապատկեր 6.



2020 թվականի 2-րդ կիսամյակում, ըստ ստացված 19 դիմում-բողոքների, վերահսկողական գործառույթներ իրականացվել են 5-ի (26%) դեպքում՝ 5 ուսումնասիրություն:

Նախորդ կիսամյակում այդ ցուցանիշը կազմել է 38%՝ վերահսկողական գործառույթներ (ուսումնասիրություն/ստուգում) են իրականացվել ստացված 32 դիմում-բողոքներից 12-ի դեպքում (6 ուսումնասիրություն, 6 ստուգում):

Ինչպես նկատում ենք՝ վերահսկողական գործընթացների անհրաժեշտություն պահանջող դիմում-բողոքների տոկոսային թիվը նվազել է նախորդ կիսամյակի համեմատությամբ:

2021 թվականի 2-րդ կիսամյակում ՀՀ 7 դպրոցներում ***(Երևանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 հ/դ, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի հ. 2 հ/դ, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու հ.12 հ/դ, ՀՀ Վայոց ձորի մարզի Շատինի մ/դ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի ա/դ, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի 1 ա/դ, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 24 հ/դ)*** իրականացված վարչական վարույթների արդյունքում կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ հայտնաբերվել են միայն՝ Երևանի Ստ. Շահումյանի անվան հ. 1, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի հ. 2 և ՀՀ Լոռու մարզի Ալավերդու հ. 12 հ/դ-ներում (Աղյուսակ 3): Երևանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 հ/դ-ին վերաբերող դիմում-բողոքը մասամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի ոստիկանության վարչություն, իսկ ՀՀ Լոռու մարզի Վանաձորի հ. 24 հ/դ-ի դիմում–բողոքը՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (այսուհետ՝ ԱԱՏՄ)՝ դիմումում բարձրացված հարցերի մի մասը ԿՏՄ լիազորություններից դուրս լինելու պատճառով:

Աղյուսակ 3.

N	*Ուսումնական հաստատությունը*	*Հայտնաբերված խախտման բնույթը*	*Ձեռնարկված միջոցառումները*
1.	***Երևանի Ստ. Շահումյանի անվան հ. 1 հ/դ***	1.Ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգի պահանջի խախտում:	Վարչական վարույթի արդյունքներն ուղարկվել են Երևանի քաղաքապետին և դպրոցի տնօրենին:
2.	***ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի հ. 2 հ/դ***	1. Ուսումնական հաստատություններում գործածվող փաստաթղթերի ցանկը սահմանելու, դրանց լրացման (գործածման) կարգի պահանջների խախտումներ: 2.Օրինակելի կանոնադրության պահանջների խախտում:	Վարչական վարույթի արդյունքներն ուղարկվել են մարզպետին և տնօրենին՝ առաջիկա մանկավարժական խորհդի նիստում թույլ տրված խախտումները քննարկելու, համապատասխան միջոցներ ձեռնարկելու և արդյունքների մասին ԿՏՄ տեղեկացնելու առաջարկով:
3.	***ՀՀ Լոռու մարզի Ալավերդու հ.12 հ/դ***	1.Մասնագիտական որակավորման պահանջի խախտում:	Վարչական վարույթի արդյունքում ընդունվել է վարչական ակտ: Հայտնաբերված խախտման հետևանքները վերացնելու համար հաստատության տնօրենին հանձնարարվել է կարգադրությունը ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսուցչի

			թափուր դասաժամերը տրամադրել համապատասխան մասնագետի:

Իրականացված **2** ստուգումների արդյունքում ***(Արմավիրի պետական բժշկական քոլեջ, Դիլիջանի պետական քոլեջ)*** էլ հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումներ, որոնց վերաբերյալ ուսումնական հաստատությունների տնօրեններին ԿՏՄ ղեկավարի կողմից տրվել են պարտադիր կատարման հանձնարարականներ (Աղյուսակ 4):

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ ստուգումների արդյունքում կազմված ակտերի, կարգադրագրերի մեկական օրինակներ ուղարկվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին:

Աղյուսակ 4.

N	***Ուսումնական հաստատությունը***	***Հայտնաբերված խախտման բնույթը***	***Ձեռնարկված միջոցառումները***
1.	Դիլիջանի պետական քոլեջ	1.Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի պահանջի խախտում: 2. Խորհրդի կողմից հաստատության ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի նախագծերի քննարկման պահանջի խախտում: 3. Լիցենզիայի պահանջի խախտում: 4. Արտաքին և ներքին գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկանքի ներկայացման պահանջի խախտում: 5. Կրթության և ուսուցման գործընթացի կազմակերպման, կադրերի ընտրության պահանջի խախտում: 6. Մոդուլային ուսումնական պլանի, առարկայական և (կամ) մոդուլային ծրագրերի և դրանցում փոփոխությունների կատարման պահանջի խախտում: 7. Անվճար և վճարովի տեղերով ընդունելիության պահանջի խախտում: 8.Ընդունելիության գործընթացի սահմանված ժամկետի պահանջի խախտում:	Համաձայն ԿՏՄ ղեկավարի 21.12.2021թ-ի №Ք-96 կարգադրագրի՝ հանձնարարվել է սահմանված կարգի համաձայն վերահաշվարկել քոլեջի բոլոր դիմորդների 2021 թվականի ընդունելության մրցույթի միավորները և սովորողներին տեղաբաշխել վճարովի ու անվճար ուսուցման համակարգերում՝ ըստ վերահաշվարկված միավորների, ինչպես նաև, սահմանված ժամկետում ապահովել քոլեջի 5 մասնագիտական մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացը: Խախտումների հետևանքները վերացնելու և արդյունքների մասին ԿՏՄ տեղեկացնելու ժամկետ է սահմանվել 2022թ.-ի փետրվարի 7-ը:

		9. Ընդունելության մրցույթի անցկացկացման սահմանված կարգի խախտում: 10.Հրամանագրման ժամկետի պահանջի խախտում: 11. Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման ու անցկացման կարգի խախտում: 12. Պետական որակավորող հանձնաժողովի նախագահի հաշվետվության քննարկման պահանջի խախտում: 13. Ավարտական փաստաթղթերի պատվիրման, բաշխման, լրացման, հաշվառման և պահպանման կարգի խախտում: 14. Ուսումնառությունն անավարտ թողած անձի ուսանողական իրավունքի վերականգնման կարգի խախտում: 15. Ուսումնառության ընթացքում մասնագիտության փոփոխման սահմանված պահանջի խախտում: 16. Ուսանողների ժամանակավոր կցագրման պահանջի խախտում: 17. Ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգի խախտում: 18. Դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման կարգի խախտում: 19. Վերապատրաստում անցած մանկավարժական աշխատողների անվանացանկի տրամադրման ժամկետի պահանջի խախտում:	
2.	Արմավիրի պետական բժշկական քոլեջ	1.Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի պահանջի խախտում: 2. Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման և թափուր տեղի համալրման կարգով սահմանված ժամկետների և պահանջների խախտումներ: 3. Խորհրդի նիստերի՝ սահմանված ժամկետի խախտումով անցկացում:	Ստուգման ընթացքում կազմվել է ակտ, որի արդյունքները տրամադրվել են ԿԳՄՍ նախարարի տեղակալին՝ քննարկելու և տեսչական մարմնին տեղյակ պահելու առաջարկով:

Դիմում-բողոքներում բարձրացված հարցերի բովանդակությունն ըստ ՀՀ մարզերի և Երևան քաղաքի ներկայացված է Աղյուսակ 5-ում.

Աղյուսակ 5.

Դիմումներում բարձրացված (նշված) հարցերը	ԵՐԵՎԱՆ	ԱՐԱՐԱՏ	ԱՐՄԱՎԻՐ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ	ԼՈՌԻ	ԿՈՏԱՅՔ	ՇԻՐԱԿ	ՍՅՈՒՆԻՔ	ՎԱՅՈՑ ՁՈՐ	ՏԱՎՈՒՇ	Ընդամենը
Գործատու–աշխատող հարաբերություններ							1				1
Տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններ, անարդյունավետ աշխատանք	2	2	1		1	2	2		1	2	13
Աշխատանքից ազատելու հարց					1						1
Դասաժամերով թերբեռնվածություն կամ դասաժամերի տրամադրում	1						1				2
Ուսուցչի թափուր պաշտոնի համար կայացած մրցույթ					1	1	1				3
Տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակում				1							1
Մանկապարտեզի, դպրոցի, քոլեջի կրթական գործընթացի կազմակերպում	1										1
Տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթի անցկացում	1										1
Քննությունների կազմակերպում		1									1
Ուսուցիչների իրավունքների ոտնահարում	1										1
Ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններ					1			1			2
Սովորողների հաճախումների հաշվառում, գնահատում						1		2			3
Փոխտնօրենի դեմ բողոք						1					1
Ընդամենը	6	3	1	1	4	5	4	4	1	2	31

Առավել շատ բարձրացված հարցերը վերաբերում են տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին:

Այս հարցին առավել շատ անդրադարձ է արվել ոչ միայն 2021 թվականի 2–րդ կիսամյակում (դիմում–բողոքներից 13-ում՝ (46%)), այլև նախորդ 2 հաշվետու ժամանակահատվածներում (2021 թվականի 1-ին կիսամյակում՝ 12 (38%) և 2020 թվականի 2-րդ կիսամյակում՝ 5 դիմում-բողոքներում (26%)):

Ըստ դիմումների թվի՝ երկրորդ տեղում ուսուցչի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթի և սովորողների հաճախումների հաշվառմանը և գնահատմանը վերաբերող հարցերն են:

Այս հարցերին անդրադարձել են 3-ական (11-ական %) դիմում-բողոքներում:

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում՝ ուսուցչի թափուր պաշտոնի համար անցկացվող մրցույթին վերաբերող հարցին անդրադարձել են 4 դիմումներում՝ 13%, իսկ 2020 թվականի 2-րդ կիսամյակում այս հարցին վերաբերող դիմումներ չեն ստացվել:

Սովորողների հաճախումների հաշվառմանը և գնահատմանը վերաբերող հարցին 2021 թվականի 1-ին կիսամյակում անդրադարձ չի կատարվել, սակայն 2020 թվականի 2-րդ կիսամյակում անդրադարձ է արվել դիմում-բողոքներից 2-ում (11%):

Երրորդ տեղում են ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններին և դասաժամերի թերբեռնվածությանը կամ դասաժամերի տրամադրմանը վերաբերող հարցերը:

Այս հարցերին անդրադարձել են 2-ական (7-ական %) դիմում-բողոքներում:

Նախորդ հաշվետու ժամանակահատվածում ուսուցիչ-սովորող փոխհարաբերություններին անդրադարձ է արվել դիմում-բողոքներից 1-ում՝ (3%): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում տվյալ հարցի վերաբերյալ դիմում-բողոքներ չեն ստացվել:

Դասաժամերի թերբեռնվածությանը կամ դասաժամերի տրամադրմանը վերաբերող հարցին նախորդ 2 հաշվետու ժամանակահատվածներում անդրադարձ չի արվել:

Հավաքագրված այլ տվյալներ ներկայացված են ստորև բերված Աղյուսակ 6-ում.

Աղյուսակ 6.

Այլ տվյալներ՝	
Դիմողը չի հայտնաբերվել	***1***
Դիմողին ուղարկվել է պատասխան գրություն	***26***
Դիմողը հրաժարվել է իր դիմումից	***3***
Դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, նշված չէ դիմողի անունը, ազգանունը, հեռախոսահամարը	***2***
Դիմումում նշված փաստարկները մասամբ են համապատասխանում իրականությանը	***1***
Դիմումում բարձրացված հարցերը դուրս են ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	***5***
Դիմումում բարձրացված հարցերը մասամբ դուրս են ԿՏՄ լիազորությունների շրջանակներից	***3***
Կարճված դիմումներ	***7***
Դիմումի վերահասցեագրում	
ԱԱՏՄ	***3***
ԿԳՄՄՆ	***1***
ՀՀ ոստիկանություն	***2***
Երևանի քաղաքապետարան	***1***

Այսպիսով՝

1. դիմում-բողոքների թիվն աճել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ 47%-ով, նախորդ կիսամյակի համեմատությամբ նվազել՝ 12.5%-ով,

2. վերահսկողության ոլորտներից խնդրահարույց է, ինչպես միշտ, միջնակարգ կրթության ոլորտը, ինչը մեր կարծիքով պայմանավորված է շահառուների մեծ թվով:

Միջին մասնագիտական կրթության ոլորտի 5 դիմում–բողոքները ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ են, որոնցից 2 դիմում-բողոք վերաբերել է՝ ***«Դիլիջանի պետական քոլեջ»***-ի և 1-ական՝ ***«Արմավիրի պետական բժշկական քոլեջ», «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ***-ների և ***Երևանի «Սուրբ Թերեզայի անվան գթության քույրերի բժշկական ինստիտուտ-քոլեջ» ՍՊԸ***-ի գործունեությանը: Հարկ է նշել, որ նախորդ կիսամյակում միջին մասնագիտական կրթության ոլորտի 8 դիմում–բողոքներից 3–ը վերաբերել են ***«Դիլիջանի պետական քոլեջ» ՊՈԱԿ***–ի գործունեությանը,

3. սկզբնական հասցեագրման աղբյուրը հաշվետու կիսամյակում 71% դեպքերում՝ ԿՏՄ-ն է: Այս ցուցանիշը նախորդ կիսամյակում կազմել է 56%, իսկ նախորդ տարվա նույն հաշվետու ժամանակահատվածում՝ 32%,

4. ստացված դիմում-բողոքների քանակով վերջին 3 կիսամյակներում Երևանը, ՀՀ Կոտայքի և Տավուշի մարզերը առաջին եռյակում են,

5. վարչական վարույթների իրականացման միջին տևողությունը աճել է 63%-ով (8 օրից դարձել է 13 օր),

6. գերակշռում են կին դիմումատուները՝ 71%,

7. ըստ ստացված դիմում-բողոքների՝ վերահսկողական գործառույթների տոկոսային թիվը նախորդ կիսամյակի համեմատ նվազել է 6%-ով (2021թ. 1-ին կիսամյակ՝ 38%, 2021թ. 2-րդ կիսամյակ՝ 32 %),

8. տնօրենի կողմից թույլ տրված անօրինականություններին և անարդյունավետ աշխատանքին վերաբերող հարցը շարունակում է մնալ դիմումներում առավել շատ բարձրացված հարցը,

9. դիմում-բողոքներից 5-ում (18%) բարձրացված հարցերը դուրս են եղել ԿՏՄ լիազորությունների շրջանակից, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքացիները բավարար չափով ծանոթ չեն ԿՏՄ լիազորությունների շրջանակին:

Ելնելով վերլուծության արդյունքներից առաջարկում ենք՝

1. առաջարկել ուսումնական հաստատությունների լիազոր մարմիններին՝ հանձնարարել իրենց ենթակայության ուսումնական հաստատություններին՝ բացառել կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների խախտումները՝ ապահովելով կրթական գործընթացի բնականոն կազմակերպում և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ,

2. 2022 թվականին ԿՏՄ-ի կողմից իրականացվելիք կանխարգելիչ միջոցառումների ընթացքում անդրադառնալ նաև ԿՏՄ լիազորությունների մասին հանրությանը տեղեկացնելու գործառույթին:

ՌԳՍՊՎԳ վարչություն